ՌՈՍՏԱՄ ԷՅԴԻՓՈՒՐ
ROSTAM EYDIPOOR

ՄԵԾ ՈՒԹՆՅԱԿԻ ԵՐԿՐՆԵՐԸ ԵՎ «ՄԵԾ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔ» ԾՐԱԳԻՐԸ

«Մեծ Միջին Արևելքը» համաշխարհային հանրության համար թե սպառնալիք է համարվում և թե գերազանց հնարավորություն: ՄԱԿ-ը 2002 և 2003 թթ. մատնանշել է այս տարածաշրջանի երկրներում առկա երեք գլխավոր բացթողումներ ու թերություններ՝ 1. ազատությունների բացակայություն 2. գիտելիքի ցածր մակարդակ 3. կանանց իրավունքների անմխիթար վիճակ: Այս իրավիճակի շարունակությունը կարող է վտանգի տակ դնել նույնիսկ Մեծ ութնյակի երկրների ազգային շահերը: Որքան ժամանակ Միջին Արևելքում մեծ լինի քաղաքական, հասարակական և տնտեսական իրավունքներից զրկված մարդկանց թիվը, այդքան ավելի հաճախակի ենք ականատես լինելու ծայրահեղականության, ահաբեկչության, միջազգային հանցագործության, անօրինական ներգաղթի և այլ նմանատիպ երևույթների խորացող ու ընդլայնվող դրսևորումներին: «Մեծ Միջին Արևելքի» երկրների երկկա վիճակագրական տվյալները բարի բուն իմաստով սարսափելի պատկեր են բացում: «Արաբական Լիգայի» քսաներկու անդամ երկրների ներքին եկամտի ընդհանուր գումարը ավելի քիչ է, քան Իսպանիայինը: 18 տարեկանից բարձր արաբ բնակչության մոտ 40 տոկոսը, այսինքն 65 միլիոն մարդ գրաճանաչ չէ, որից մեկ երրորդը կազմում են կանայք: 2010 թ. ավելի քան 50 միլիոն երիտասարդ մուտք գործեց աշխատաշուկա և այս թիվը 2020-ին հասնելու է 100 միլիոնի շեմին, հետևապես անհրաժեշտ է նախապատրաստել 6 միլիոն նոր աշխատատեղեր: Տարածաշրջանի բնակչության մեկ երրորդը ապրում է օրեկան 2 դոլարից ցածր եկամտով: Այս տարածաշրջանի կենսամակարդակի բարելավման համար անհրաժեշտ է կրկնապատկել տնտեսական աճի ներկայիս չափերը, այսինքն երեք տոկոս տնտեսական աճի ցուցանիշը հասցնել 6 տոկոսի: Ինտերնետը հասանելի է միայն բնակչության 6.1 տոկոսին: Այս ցուցանիշը ցածր է աշխարհի ցանկացած այլ երկրից, նույնիսկ, հարավաֆրիկյան երկրներից: Արաբական երկրների խորհրդարաններում պատգամավոր կանայք կազմում են ընդամենը 5.3 տոկոս, որը չնչին տարբերությամբ է գերազանցում աֆրիկյան երկրների 4.8 տոկոս ցուցանիշը: [2] Ըստ ՄԱԿ-ի 2002թ. մարդկային զարգացման զեկուցագրի, արաբ երիտասարդների 51 տոկոսը ցանկություն ունի արտագաղթել եվրոպական երկրներ:[9] Այս գործընթացի շարունակման դեպքում տարեցտարի

կբարձրանա քաղաքական իրավունքներից զրկված և աշխատանքի ու կրթության նվազագույն պայմանների կարոտ երիտասարդության թիվը: Այսպիսի իրավիճակը լուրջ սպառնալիք է տարածաշրջանային կայունության և մեծ ութնյակի երկրների միասնական շահերի համար: Լավագույն լուծումը բարեփոխումների իրականացումն է: Արաբական աշխարհի մարդկային գործոնի վերաբերյալ հրապարակված զեկուցագիրը համոզիչ ու խթանիչ փաստարկ է տարածաշրջանում նոր գործընթացներ կազմակերպելու ուղղությամբ, որի անհրաժեշտության մասին բազմաթիվ անգամ բարձրաձայնել են այդ երկրների մտավորականները, հասարակական-քաղաքական ակտիվիստները և մասնավոր հատվածը: Միջին Արևելքի մի շարք երկրների ղեկավարները գործնականում արձագանքել են այս պահաջին և որոշակի քայլեր արել հասրակական-քաղաքական ու տնտեսական բարեփոխումների ուղղությամբ, որոնք արժանացել են Մեծ ութնյակի երկրների հավանությանն ու հովանավորմանը: [11] Աֆղանստանի և Իրաքի վերակառուցման բազմակողմ աշխատանքները, «Եվրոպայի Միջին Արևելյան ծրագիրը» և «Միացյալ Նահանգների Միջին Արևելյան ծրագիրը» ապացուցում են այս իրողությունը: Այս փոփոխությունները և Աֆղանստանի ու Իրաքի ազատագրումը երկու բռնապետական վարչակարգերի ճիրաններից նպաստավոր հող են պատրաստում պատմական այս տարածաշրջանում ժողովրդավարության դրսևորումների արմատավորման համար: Մեծ ութնյակը պետք է Միջին Արևելքի երկրների բարեփոխիչ ղեկավարների հետ կազմի գործընկերության հեռահար ծրագրեր հենվելով միասնական առաջնահերթությունների վրա, այն է արաբական աշխարհի մարդկային ներուժի անմխիթար վիճակի բարելավումը:[1] Այս գործը ենթադրում է հետևյալ քայլերը. ա/ խթանել տարածաշրջանի ժողովրդավարացումը և հովանավորել ժողովրդավարական իշխանություններին, բ/ ձևավորել մտավորականության խավ, գ/ զարգացնել տնտեսական հնարավորությունները: Սրանք դեպի տարածաշրջանի զարգացմանը տանող ճանապարհի անհրաժեշտ քայլերն են, քանի որ ժողովրդավարությունը համապատասխան նախադրյալներ է պահանջում: Բարձր որակավորում ունեցող և մասնագետ մարդուժը զարգացման գործիքն ու միջոցն է հանդիսանում, իսկ տնտեսական աճի ծրագրերը զարգացման շարժիչ ուժը:[10]

Համառոտ անդրադառնանք այս երեք նախադրյալներին:

Առաջին. Ժողովրդավարության խթանում և ժողովրդավարական իշխանությունների հովանավորում. «Իշխանության մեջ մասնակցություն ունենալու տեսակետից, արաբական աշխարհի երկրների և այլ տարածաշրջանների միջև կա մեծ տարբերություն .... այս ճեղքը ավելի խոր է

բացված հատկապես, մարդկային ռեսուրսի զարգացման ոլորտում, որը համարվում է քաղաքական հետամնացության ամենացավալի կողմերից մեկը»: [11] Ժողովրդավարությունն ու ազատությունը անձի անահատական գործունեության ծաղկման համար կենսական նախապայման են ժողովրդավարությունը, որը սակայն բնորոշ չէ Մեծ Միջին Արևելքի երկրներին: «Ֆրիդրիխ հառուսի» 2003թ. հրապարակած տարեկան զեկույցում Մեծ Միջին Արևելքի երկրներից միայն Իսրայելն է ճանաչվել որպես «ազատ» երկիր, իսկ չորս այլ երկրներ բնութագրվել են «մասամբ ազատ»: Արաբական երկրների մարդկային ռեսուրսների զարգացման զեկույցների համաձայն 90-ականների վերջին տարիներին աշխարհի յոթ տարածաշրջանների շարքում այդ երկրները գտնվում են ամենացածր ատիճանում: Կանանց տեղի ու դիրքի տեսակետից Արաբական աշխարհը միայն հարավֆրիկյան մեծ Սահարայի երկրներից է կարողացել առաջ անցնել: Ուշագրավ է, որ չնայած արաբական երկրների անմխիթար պայմաններին, այդ երկրների քաղաքացիները աշխարհում ամենից շատ են հավանություն տալիս ժողովրդավարական գաղափարներին և խորշում տոտալիտար իշխանությունից: Սա նպաստավոր առիթ է Մեծ ութնյակի երկրների համար խթանելու տարածաշրջանի ժողովրդավարացման գործընթացները: [12]

Ազատ ընտրությունների նախագիծ. Քսանմեկերորդ դարի առաջին տասնամյակում Մեծ Միջին Արևելքի մի քանի երկրներ պատրաստակամություն հայտնեցին կազմակերպել նախագահական, խորհրդարանական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ: Մեծ ութնյակի երկրները կարող են ազատ ու արդարացի ընտրություններ անցկացնելու նպատակով օգնել այն երկրներին, որոնք լուրջ են վերաբերվում ազատ ընտրություններ անցկացնելու հարցին: Այդ աջակցությունը կարող է լինել հետևյալ ուղղություններով. ա/ Ազատ, թափանցիկ ու արդարացի ընտրություններ իրականացնելու նպատակով տեխնիկական հնարավորությունների ընձեռում ընտրության գործընթացին, հասարակության լայն շերտերի քաղաքացիական դաստիարակություն և կանանց ներգրավվածության շեշտադրում: բ/ Խորհրդարանական մակարդակում ուսուցողական ծրագրերի և փոխանակումների կազմակերպում: գ/ Խորհրդարանի դերի և նշանակության ընդգծում, պատգամավորների համար միջխորհրդարանային և միջպետական հանդիպումների և ժողովների կազմակերպում: դ/ Ղեկավարման և լիդերության հատուկ դասընթացների կազմակերպում կանանց համար: [13] Արաբական երկրների հասարակական-քաղաքական կյանքում կանանց մասնակցությունը մեծացնելու նպատակով Մեծ ութնյակի երկրները կարող են ստեղծել ոչ-պետական հասարակական կազմակերպություններ և կրթել ակտիվ կանանց, ովքեր

ցանկություն ունեն մասնակցել ընտրապայքարին: Այդ շրջանակում կարելի է կազմակերպել միջազգային հանդիպումներ և այցելություններ:

Անկախ մամուլ. ՄԱԿ-ի մարդկային ռեսուրսների մասին զեկուցագրի տվյալներով Միջին Արևելքում յուրաքանչյուր 1000 քաղաքացուն բաժին է հասնում 53 թերթ ու պարբերական, մինչդեռ այս ցուցանիշը արդյունաբերական զարգացած երկրներում կազմում է 285 թերթ յուրաքանչյուր քաղաքացուն: Բացի այդ, միջինարևելյան օրաթերթերը ցածր որակ ունեն, իսկ հեռուստատեսային ալիքները մեծ մասամբ պատկանում են պետությանը կամ վերահսկվում պետության կողմից, հետևաբար լրատվությունը անկողմնակալ ու օբյեկտիվ չի կատարում և չկան վերլուծական բնույթի ծրագրեր: Ընդհանրապես, այդ երկրներում ժողովրդական լայն զանգվածների մոտ տարածված չէ թերթ կարդալու սովորությունը: Մամուլի դերակատարությունը մեծացնելու ուղղությամբ Մեծ ութնյակի երկրները կարող են ձեռնարկել հետևյալ քայլերը. ա/ ԶԼՄ-ների աշխատակիցների համար միջազգային հանդիպումների և խորհրդաժողովների կազմակերպում: բ/ Ժուռնալիստիկական կրթության համար կրթաթոշակների սահմանում և արտերկրում մասնագիտանալու հնարավորությունների ընձեռում: Զարգացած երկրների ժուռնալիստների գործուղումը Միջին Արևելք ընտրությունների գործընթացը հետևելու և մեկնաբանելու, նաև ուսումնական հատուկ դասընթացների կազմակերպման նպատակով: գ/ Արբանյակային ալիքների ստեղծում և հեռարձակում, որոնք վերջին տարիներին կարողացել են արտացոլել Միջին Արևելքի խնդիրները և ազդել այդ երկրների մտավորական խավերի վրա: [5]

Քաղաքացիական հասարակություն. Մեծ Միջին Արևելքում իրական բարեփոխումների շարժիչ և առաջատար ուժերը պետք է ձևավորվեն հենց նույն տարածաշրջանի ներսում, հետևաբար Մեծ ութնյակի երկրները պետք է ամրապնդեն ու զարգացնեն քաղաքացիական հասարկության արդյունավետ ինստիտուտները: Այս ուղղությամբ անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը. ա/ Հասարակական ու քաղաքացիական ոչ պետական կազմակերպությունների, հատկապես, մարդու իրավունքների պաշտպանության գրասենյակների վրա ճնշում չբանեցնելու և նրանց ազատ գործունեությունը չկասեցնելու ուղղությամբ տարածաշրջանի երկրների քաջալերում և խթանում:[8] բ/ Ժողովրդավարության, մարդու իրավունքների, ԶԼՄ-ի և կանանց հարցերի ոլորտներում աշխատող ոչ-պետական արդյունավետ կազմակերպություններում ուղղակի ներդրումների կատարում: գ/ Ավելի մեծ ներդրումների կատարում տեղական կառույցներում, ինչպես օրինակ, Սաուդական Արաբիայում աշխատող «Վեստ մինիստր հաստատության» կամ ամերիկյան «Ազգային հովանավորում ժողովրդավարու-

թյանը» կազմակերպությունների մեջ: Այդ կազմակերպությունների համար քաղաքացիական աշխատանքների պլանավորման հատուկ դասընթացների և փոխադարձ հանդիպումների կազմակերպում, տարածաշրջանային ակտիվ կազմակերպություն ների միջև ցանցերի ստեղծում: [8]

Երկրորդ. Տարածաշրջանում մտավորական հանրության կամ էլիտայի ձևավորում. «Ճանաչողությունն ու գիտակցությունը ճանապարհ է բացում դեպի բարգավաճում և ազատագրում, հատկապես, արդի գլոբալացվող աշխարհում»: (Արաբների մարդկային ռեսուրսների մասին զեկույց, 2002 թ.): Մեծ Միջին Արևելքը, որը Հին աշխարհի իմաստասիրության և գիտական հայտնագործությունների օրրանն էր, այժմ զգալի չափով ետ է մնացել արդի աշխարհի տեղեկատվական գործընթացներից: Տեղեկատվական այս հսկայական բացը, որին ավելանում է նաև «ուղեղների արտահոսքի» երևույթը, լուրջ խոչընդոտներ են այդ երկրների զարգացման ճանապարհին: Բարձրագույն կրթություն ստացող երիտասարդների մեկ չորրորդը արտագաղթում է այլ երկրներ: Հունարեն լեզվով թարգմանված գրքերի քանակը (թեև այդ լեզվով խոսում են ընդամենը 11 միլիոն մարդ) հինգ անգամ ավելի մեծ է, քան արաբերենով թարգմանված գրքերի քանակը: Մեծ ութնյակի երկրները կարող են նպաստել տարածաշրջանի կրթական մակարդակի բարձրացման, բարձրագույն կրթության համակարգի զարգացման և նոր հմտությունների ուսուցման գործին:

Բազային կրթության տարածում. Տարածաշրջանի պետությունների կողմից կրթական ոլորտում փոքր ներդրումների և դրան զուգահեռ բնակչության արագ աճի և կրթության մեծացող պահանջարկի արդյունքում, Մեծ Միջին Արևելքի երկրները տառապում են հիմնարար (բազային) կրթության բացակայությունից, դրան ավելացնենք նաև կանանց կրթության ծրագրերին հատկացվող չնչին ներդրումները: Մեծ ութնյակի երկրները բազային կրթության ընդլայնման ուղղությամբ կարող են մշակել հետևյալ ծրագիրը. 2003 թ. ՄԱԿ-ը անգրագիտության դեմ պայքարը ձևակերպեց «անգրագիտության վերացումը իբրև ազատություն» նշանաբանով: Իրոք, անգրագիտությունից ձերբազատված սերունդ ձևավորելու անհետաձգելի հրամայականի վրա պետք է կենտրոնանան Ութնյակի երկրների ջանքերը հատուկ շեշտադրելով կանանց կրթության կարևորությունը: Այդ ծրագրերը պետք է ներգրավեն նաև մեծահասակներին, որոնք Միջին Արևելքում ստվար զանգված են կազմում՝ 65 միլիոն չափահաս անգրաճանաչներ: [7]

Անգրագիտության դեմ պայքարող խմբեր. Կանանց և աղջիկների շրջանակում տարածելով գրաճանաչությունը և հիմնելով ուսումնական հաստատություններ, նրանցից կարելի է ընտրել ու նախապատրաստել ապագա ուսուցիչների: Այս քաղաքականության շրջանակներում կարելի է

համագործակցել ՅՈՒՆԵՍԿՈ-ի ուղեցույց մի շարք ծրագրերի հետ, ինչպես՝ «Կրթություն բոլորի համար» ծրագիրը, կամ կիրառել «Անգրաճանաչության դեմ պայքարող խմբեր» ձևավորելու մարտավարությունը:

Ուսումնական գրքեր. Արաբական երկրների մարդկային ռեսուրսներին վերաբերող զեկույցում մատնանշվել է փիլիսոփայության, գրականության և բնագիտության բնագավառներում բազային գրքերի սղության խնդիրը, նաև բուհական ուսումնական ձեռնարկների ցավալի մակարդակը: Մեծ ութնյակի անդամներից յուրաքանչյուրը կարող է կազմակերպել հայրենի երկրի «դասական» գրքերի թարգմանչական աշխատանքը, աջակցել գրքերի ավիրատվության, կարևոր գրքերի հրատարակման և այլ նմանատիպ աշխատանքներին: [1]

Կրթական բարեփոխումներ. «ԱՄՆ-ի և Միջին Արևելքի գործընկերություն» ծրագիրը կազմակերպում է խորհրդաժողովներ և ուսումնասիրում տարածաշրջանի կրթական մարտահրավերները, թերություններն ու բացթողումները՝ առաջադրելով լուծումներ և նախագծեր: Ութնյակի երկրները ևս կարող են մասնակցել նման խորհդաժողովներին և իրականացնել Մեծ Միջին Արևելքի նախագծի դրույթները:

Ինտերնետային ուսուցման ընդլայնում. Ինտերնետից օգտվելու տեսակետից Միջին Արևելքի երկրները ամենացածր ցուցանիշներն են արձանագրել: Չափազանց կարևոր է կրճատել այս տարածաշրջանի տեղեկատվական ու հեռահաղորդակցության և հեռավար կրթության մակարդակների խոր ճեղքը աշխարհի մյուս հատվածների համեմատությամբ: Տարածաշրջանում ինտերնետային ցանցերն ընդլայնելու և պետական ու մասնավոր հատվածների հետ համագործակցություն ծավալելու համար Մեծ ութնյակի երկրներն ունեն պոտենցիալ ուժեր: Համակարգչի և համացանցի կիրառման ընդլայնումը հրատապ հարց է հատկապես առավել ցածր ցուցանիշներ ունեցող երկրների՝ Իրաքի, Աֆղանստանի, Պակիստանի, Եմենի, Լիբիայի, Սիրիայի, Ալժիրի, Եգիպտոսի և Մագրիբի համար: Համակարգչի օգտագործման և ինտերնետային ցանցերի ընդլայնման աշխատանքները պետք է սկսել դպրոցական մակարդակից և վերը նշված անգրագիտության դեմ պայքարի ծրագրի շրջանակում: [6]

Երրորդ. Տնտեսական զարգացման ապահովում. Միջինարևելյան երկրների և ժամանակակից աշխարհի միջև տնտեսական մեծ տարածության կրճատումը պահանջում է այնպիսի մի վերափոխում, ինչպիսին տեղի ունեցավ նախին Արևելյան Եվրոպայի կոմունիստական ճամբարի երկրներում, այսինքն տնտեսությանը մասնավոր հատվածի, հատկապես, փոքր ու միջին բիզնեսի ազատականացումը, քանի որ դա համարվում է տնտեսական աճի և աշխատանքային նոր հնարավորությունների

ձևավորման շարժիչ ուժը: Միջին խավի ձևավորումը ժողովրդավարության և ազատության գլխավոր նախադրյալն է: Այս ուղղությամբ Մեծ ութնյակի երկրները կարող են նախաձեռնել հետևյալ ծրագրերն ու մոտեցումները.

-Տնտեսական զարգացմանը նպաստող ներդրումներ. Փոքր նախագծերի և ծրագրերի վարկավորում. Միջին Արևելքում փոքր բիզնեսի ընդլայնումը սովորաբար ֆինանսական դժվարությունների առջև է կանգնում և բարձր շահավետություն չի արձանագրում: Փոքր ձեռնարկատիրությունների, հատկապես, կանանց կողմից դեկավարվող նախագծերի ֆինանսական հովանավորումը կամ ֆինանսական ներդրումները կարող են մեծ խթան հանդիսանալ փոքր նաձաձեռնությունների աճի համար: Այս նպատակը կարելի է իրականացնել քիչ տոկոսադրույքով երկարաժամկետ վարկերի միջոցով, որոնք փոքր բիզնեսի համար շարժիչ ուժի դեր ունեն: Փոքր բիզնեսն ինքը կբացի իր ուղին և Ութնյակի կողմից հավելյալ նոր ներդրումների կարիք չի զգացվի: Մեր գնահատմամբ, անհրաժեշտ է 1.2 միլիոն տնտեսական սուբյեկտների, որոնցից 750 հազարը կազմում են կանայք, հատկացնել 400-500 միլիոն դոլարի հնգամյա վարկեր:[2] Սա աղքատության շեմը հաղթահարելու նվազագույն մակարդակն է:

Նպատակահարմար է, որ Մեծ միջին Արևելքի երկրները Մեծ ութնյակի երկրների հետ միասին «Արժույթի Միջազգային հիմնադրամի» օրինակով ստեղծեն մի հիմնադրամ, որը կնպաստի տարածաշրջանի տնտեսական առաջխաղացմանը: Նախընտրելի է, որ նման հիմնադրամի կառավարումը կատարվի Մեծ ութնյակի երկրների մասնավոր հատվածի մի խումբ ձեռներեցների կողմից, որպեսզի նրանց միջոցով տարածաշրջան փոխանցվեն մասնագիտական փորձն ու հմտությունը:

Միջին Արևելքի զարգացման բանկ. Մեծ ութնյակը «Բարգավաճման ու վերակառուցման Եվրոպական բանկի» օրինակով կարող է նմանատիպ մի բանկ հիմնել տարածաշրջանում, որը վարկեր կտրամադրի բարեփոխումներ կատարող երկրներին: «Մեծ Միջին Արևելքի զարգացման բանկը» կարող է ամուր թիկունք դառնալ տարածաշրջանի տեխնոլոգիական վերազինման և զարգացման ծրագրերի իրականացման համար: Ֆինանսական աջակցությունը և վարկերը պետք է ուղղորդվեն կենսական նշանակություն ունեցող ոլորտներին և շոշափելի արդյունքներ արձանագրող ծրագրերին:

Աջակցություն ֆինանսական համակարգի բարեփոխման գործին. Տարածաշրջանի արժույթային ծառայությունների բարելավման և համաշխարհային ֆինանսական շուկայում ինտեգրվելու նպատակով անհրաժեշտ է, որ Ութնյակի երկրները աջակցություն ցուցաբերեն և բարեփոխեն այդ երկրների ֆինանսական համակարգը: Աջակցությունը պետք է ուղղորդված լինի արժույթային ծառայությունների ազատականացմանը, որը հնարավոր

է իրագործել տեխնոլոգիական ու փորձագիտական աջակցության շնորհիվ: Անհրաժեշտ է սահմանափակել պետության արժույթային ու ֆինասական ծառայությունների վերահսկումը, վերացնել միջպետական արժույթային փոխանակումների արգելքները, արդիականացնել բանկային ծառայությունները, բարելավել ու ընդլայնել շուկայական տնտեսության հովանավորման գործիքները և ներդնել համապատասխան ենթակառույցներ:

Ազատ առևտրի ծրագիր. Միջինարևելյան երկրների միջև առևտրային փոխանակումների ծավալը չափազանց փոքր է: Տարածաշրջանի երկրները մեծ մասամբ առևտրային կապեր ունեն ոչ թե հարևան, այլ հեռավոր երկրների հետ: Սահմանային փոխանակումներն ու կապերը գրեթե բացակայում են, և այս ոլորտում կան բազմաթիվ մաքսային ու ոչ մաքսային խոչընդոտներ: Մեծ ութնյակի երկրները միջտարածաշրջանային առևտրական կապերը զարգացնելու ուղղությամբ կարող են իրականացնել հետևյալ ծրագիրը. Անհրաժեշտ է, որ Մեծ ութնյակի երկրները ավելի շատ կարևորեն Առևտրի Համաշխարհային բանկին տարածաշրջանի երկրների անդամակցության հարցը, դրան զուգահեռ ոչ-մաքսային խոչընդոտների կրճատման հարցերը, ինչի արդյունքում միջինարևելյան երկրները նոր պարտավորություններ կստանձեն «Հեղինակային իրավունքի առևտրային կողմերի», «Պետական գնումների պայմանագրերի» և այլ նման բնագավառներում: Տեխնոլոգիական աջակցության և ֆինանսավորման չափն ու ծավալը պետք է որոշվեն ըստ տվյալ պետության ստանձնած պարտավորությունների չափի ու որակի:

Առևտրային ազատ գոտիներ (գոնաներ). Մեծ ութնյակի երկրները կարող են տարածաշրջանում հիմնադրել ազատ առևտրի սահմանային գոտ կամ ոչ սահմանային ազատ գոտիներ, որոնց նպատակն է բարելավել միջպետական առևտրային կապերը և լուծել մաքսային հարցերը, սահուն-նացնել մաքսային անցակետերի աշխատանքները, հստակեցնել առևտրային փոխանակումների ընթացակարգն ու կանոնակարգը: Այս գործը կնպաստի տարածաշրջանի երկրների տնտեսական համակարգի մասնավոր հատվածի աշխուժացմանը և զարգացմանը: [15]

Մեծ Միջին Արևելքի տնտեսական հնարավորությունների տրիբունա

Մեծ Միջին Արևելքի երկրների միջև փոխգործակցությունը խորացնելու և խթանելու նպատակով, Մեծ ութնյակի խումբը կարող է Ութնյակի երկրների բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցությամբ հիմնադրել «Միջին Արևելքի տնտեսական հնարավորությունների ազատ տրիբունա», որտեղ կքննարկվեն տնտեսական վերափոխումներին առնչվող համատեղ խնդիրները: Այս տրիբունան կարող է որոշ չափով օրինակ վերցնել ՕՊԵԿ-

ի մոդելից և քննարկումներ ու բանակցություններ վարել տարածաշրջի առևտրաֆինանսական և այլ հարցերի շուրջ:

Գրականություն

1. Հուսեյնի, Հասան. «Ավելի մեծ Միջին Արևելքի նախագիծ», Ժամանակակից Աբրար, Թեհրան, 2004 թ., էջ 60-64:

2. Շիրուդի, Մորթեզա, «Մեծ Միջին Արևելքի նախագիծը. Արևմուտք և մուսուլման երկրներ, «Անդիշեհ Թաղրիբ» պարբերական, Թեհրան, 2004 թ., էջ 86:

3. «Մեծ Միջին Արևելքի ռազմավարությունը կամ նոր պատերազմ իսլամին դիմագրավելու նպատակով», «Հեղայաթ» վերլուծական ամսագիր, Թեհրան, հ. 35, 2004 թ.

4. «Սիոնիզմի ստրատեգիան արաբական աշխարհում և նրա հարևան երկրներում», Հեղայաթ վերլուծական ամսագիր, 8-դ համար, 2001 թ.

5. «Մեծ Միջին Արևելք նախագծի բաղադրիչները և նախահիմքերը», «Հեշմ անդազ» հրատարակչություն, 14-րդ համար, Թեհրան, 2004 թ.

6. «Մեծ Միջին Արևելք. Ոլորտներ և հեռանկարներ», Հեղայաթ վերլուծական ամսագիր, Թեհրան, հ. 45, 2004 թ.

7. «Մեծ Միջին Արևելքը և Իրանի անվտանգությունը», «Բազթաբ» ամսագիր, Թեհրան, 34-րդ համար, 2004 թ.

8. Դուդիանի, Դելապորտա, « Սոցիալական շարժումների մասին», թարգմանիչ Մոհամմադ Թաղի Դելաֆրուզ, Թեհրան, 2005 թ.

9. Մոշիրզադեհ, Հոմեյրա, «ԱՄՆ արտաքին քաղաքականության շրջադարձը և հարձակում Իրաքի վրա», Իրավունք և քաղաքագիտություն պարբերական, Թեհրանի համալսարան, 2007 թ.

10. «Ամերիկյան ժողովրդավարություն և Մեծ Միջին Արևելք», Հեղայաթ վերլուծական ամսագիր, Թեհրան, 39-րդ համար, 2005 թ.

11. Peter j. katzenstein, ed. The culture of national security: Norms and identity in world politics, New York. Columbia university press, 1996. p. 369

12. John Ikenbery, ed. American Democracy promotion: Impulse, strategies and impact, Oxford university press, 2000.

13. Barry Hindess, discourses of Power, 0xforde, 1996

14. Nau, Henry, At Home Abrode: Identity and power in American foreign policy, Cornel university press, 2002

15.Samuel Huntington, the erison of American Dational interest foreign Aff. air, September, 9ctober, 1997.

THE G8 COUNTRIES AND THE GREAT MIDDLE EAST

The Great Middle East is a threat and the unique opportunity to the international community. Its Threats such as lack of freedom; the low level of knowledge and poor status of women in this region; can lead to consequences that not only for the national interests of their countries ; but also threaten for the G8 countries.

In this paper attempted to discus about encouraging democracy and establishment democratic governments; free elections; reform the education system; economic and investment development and establishing free trade zones in the Middle East.